ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐ Վ. Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

30 նոյեմբերի 2023թ.

Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Հովհաննես Սիմոնի Ասատրյանի «Խաղողագինեգործական համալիրի զարգացման հիմնահարցերը ՀՀ Արմավիրի մարզում» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրարային էկոնոմիկայի, Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնների 2023 թվականի նոյեմբերի 30-ին (արձանագրություն N 4) կայացած համատեղ նիստում, մասնակցությամբ՝ տնտեսագիտության թեկնածուներ, դոցենտներ Հ. Վ. Հովհաննիսյանի, Ա. Հ. Հարությունյանի, Լ. Ա. Խաչատրյանի, Լ. Ա. Աղասարյանի, Ա. Գ. Մատինյանի, Ծ. Բ. Խալաթյանի, Ա. Ս. Շահբազյանի, Ս. Վ. Մելոյանի, Ք. Ս. Սահակյանի, Մ. Է. Հովհաննիսյանի, Կ. Պ. Մնացականյանի, Լ. Ա. Վարդանյանի, Կ. Ա. Մալխասյանի, Ն.Յ. Սարգսյանի, Լ. Մ. Եդիգարյանի ամբիոնների մասնագետների, ասպիրանտների և հայցորդների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խաղողագործությունը ՀՀ գյուղատնտեսության հնագույն և ավանդական ճյուղերից մեկն է: Ըստ ատենախոսի, խաղողագործությունը, կոնյակագործությունը, գինեգործությունը պետք է դիտարկել մեկ ընդհանուր համակարգի՝ խաղողագինեգործական համալիրի համատեքստում, քանզի տնտեսության այս ճյուղերը սերտորեն կապված են միմյանց և հանդիսանում են խաղողի հումքով ոգելից խմիչքների

արժեշղթայի կարևորագույն օղակները:

Խորհրդային տարիներին ունեցած կտրուկ աճով, ապա անկումներով, ինքնունակաների սկզբի ճգնաժամային ժամանակահատվածներով հանդերձ, ներկայումս խաղողագինեգործական ոլորտը ապահովում է բավականին բուռն աճ, նկատելի է հայկական գինու որակի և համաշխարհային շուկայում իմիջի բարձրացման դրական միտումները: Դրական միտումներով հանդերձ ոլորտում առկա են չլուծված հարցեր, որոնք խոչնդոտում են ոլորտի կայուն աճին՝ ինչով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է ՀՀ Արմավիրի մարզում խաղողագինեգործական համալիրի ունեցած տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական կարևոր նշանակությամբ: Ոլորտի հետագա զարգացումը և դրա համատեքստում խաղողագինեգործական արտադրանքի մրցունակության բարձրացումը ենթադրում են խաղողագործության, կոնյակագործության և գինեգործության ճյուղերում գործունեության արդյունավետության բարձրացումը, ինչով էլ պայմանավորված է ընտրված թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակն է ՀՀ Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրի հեռանկարային զարգացման հիմնահարցերի համակողմանի բացահայտումն ու դրանց լուծման ուղիների առաջադրումը: Այդ նպատակի իրականացման համատեքստում ատենախոսության շրջանակներում նախանշվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել խաղողագործության, կոնյակագործության և գինեգործության ճյուղերի զարգացման վիճակն ու միտումները ՀՀ-ում,
- վերլուծել խաղողագինեգործական համալիրի ուսումնասիրությունների տարբեր մեթոդաբանական ասպեկտները, այդ մոտեցումների արտասահմանյան փորձը,
- վերլուծել խաղողագինեգործական համալիրը կարգավորող իրավաօրենսդրական դաշտը և դրա ազդեցությունը ոլորտի գործունեության վրա,
- վերլուծել ՀՀ խաղողագինեգործական համալիրի պետական կարգավորման

առանձնահատկությունները,

- ուսումնասիրել ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործության վիճակը, խաղողագործական տնտեսությունների արտադրատնտեսական առանձնահատկությունները,
- ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների առջև ծառացած արդի խնդիրների համակողմանի վերլուծության և բացահայտման նպատակով կատարել հարցումներ՝ ընտրանքային հարցումների մեթոդի կիրառմամբ,
- իրականացնել ՀՀ խաղողագործության ճյուղի արդյունքային ցուցանիշների վրա տարբեր տնտեսական գործոնների ազդեցության էկոնոմետրիկ գնահատում,
- գնահատել Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների գործունեության տնտեսական արդյունավետությունը և դրա վրա տարբեր ներտնտեսային և արտաքին գործոնների ազդեցության բնույթը,
- կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա բացահայտել ոլորտում առկա հիմնախնդիրները,
- մշակել խաղողագինեգործական համալիրի խնդիրների լուծմանն ու համալիրի զարգացմանն ուղղված առաջարկություններ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության մեջ իրականացված վերլուծությունների և հետազոտությունների արդյունքներից գիտական նորույթ համարվում են հետևյալները.

- գնահատվել է ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների գործունեության արդյունավետությունը և առաջադրվել են տնտեսությունների վարման արդյունավետ տարբերակները,
- ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների համակողմանի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են մարզի խաղողագինեգործական համալիրի հիմնախնդիրները, և գնահատվել են զարգացման հնարավորությունները,
- բացահայտվել է ՀՀ խաղողագործության ճյուղի արդյունքային

ցուցանիշների վրա տարբեր գործոնների ազդեցության բնույթը,

- առաջադրվել են ՀՀ Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրի հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 152 էջի վրա՝ առանց հավելվածների, պարունակում է 28 աղյուսակ, 12 գծապատկեր, 2 նկար:

Առաջաբանում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «ՀՀ խաղողագինեգործական համալիրի վիճակը, տնտեսական նշանակությունը ազգային տնտեսության համակարգում և զարգացման նախադրյալները» գլխում ուսումնասիրվել են ՀՀ խաղողագործության, կոնյակագործության ու գինեգործության ճյուղերի վիճակը և միտումները:

Ատենախոսության երկրորդ՝ «Խաղողագինեգործական համալիրի ուսումնասիրության մեթոդաբանական մոտեցումները, ոլորտում պետական քաղաքականության վերլուծությունը և զարգացման հնարավորությունների գնահատումը Արմավիրի մարզում» գլխում ուսումնասիրվել են.

- խաղողագինեգործության ոլորտի արտասահմանյան և հայրենական տնտեսագիտական հետազոտությունները,
- ՀՀ-ում ոլորտը կարգավորող օրենսդրահիրավական դաշտը, կիրառվող պետական քաղաքականությունը և ոլորտի վերահսկողական կառուցակարգերը,
- Արմավիրի մարզում խաղողագործության ճյուղի վիճակը:

Ատենախոսության երրորդ՝ «Խաղողագինեգործական համալիրի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ Արմավիրի մարզում» գլխում

ուսումնասիրվել է համալիրի ճյուղերի արտաքին տնտեսական գործունեության առանձնահատկությունները, կատարվել է համալիրի քանակական գնահատում՝ տնտեսամաթեմատիկական մոդելավորման և էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ և ստացված արդյունքների համադրմամբ մշակվել են համալիրում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ:

Եզրակացություններ բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքները և բերված են առաջարկություններ Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրի զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության կառուցվածքը ցանկալի կլիներ ներկայացնել առավել հստակ տրամաբանական կառուցվածքով: Ատենախոսության երկրորդ գլխում, ըստ խաղողագինեգործական ոլորտի առանձին տարրերի՝ խաղողագործություն, գինեգործություն, կոնյակագործություն, հիմնախնդիրները պետք է հստակ խմբավորված ներկայացվեին, այնինչ խաղողագինեգործական համալիրի հիմնահարցերը տեղ են գտնել աշխատանքի 3.3. ենթահարցում, այն էլ լուծման ուղիների հետ միասին: Ատենախոսության 2.2. ենթահարցը, որը վերաբերվում է Արմավիրի մարզի խաղողագործության ճյուղի վիճակի գնահատմանը, ցանկալի կլիներ ներկայացնել առաջին գլխում՝ ՀՀ խաղողագործության վիճակի ներկայացմանը զուգահեռ: Գինեգործության և կոնյակագործության վիճակը առանձին քննարկման առարկա է դառնում ՀՀ-ի դեպքում, բայց առավել խորությամբ չի քննարկվել Արմավիրի մարզի համար: Մեթոդաբանական հարցերի վերլուծությունը տրամաբանական կլիներ ներկայացնել աշխատանքի առաջին ենթագլխում, այլ ոչ թե երկրորդ, հիմնախնդիրների բացահայտումը, ըստ առանձին ոլորտների, ներկայացնել երկրորդ գլխում, իսկ լուծման ուղիները երրորդ գլխում:

2. Ըստ մեզ, Արմավիրի մարզի խաղողագինեգործական համալիրի ներկայացման ժամանակ չի ապահովվել համամասնություն խաղողի արտադրության խնդիրների բացահայտման և վերամշակմանը առնչվող խնդիրների բացահայտման միջև: Վերլուծության մեջ հիմնական տեղը հատկացվել է խաղողագործությանը:

Խաղողագործության զարգացման հնարավորությունները բացահայտելու նպատակով ցանկալի կլիներ պարզել գինու և կոնյակի գործարանների արտադրական հզորությունների օգտագործման մակարդակը, խաղողի մթերման դրանց ներուժը: Դրանով կհիմնավորվեր նաև խաղողի արտադրության ընդլայնման անհրաժեշտությունը և արտադրողի ու մթերողի համագործացության փոխշահավետությունը:

Ատենախոսը խաղողագինեգործական կլաստերների ստեղծումը համարելով համալիրի զարգացման առանցքային ուղղություն, չի նշում դրա գործողության կառուցակարգը, տարբեր օղակների, մասնավորապես արտադրող-վերամշակող կազմակերպությունների համագործակցության ձևերը, հարաբերությունների կարգավորման եղանակները:

3. Ատենախոսության գիտական նորույթներում ևս շեշտադրված է խաղողագործության խնդիրների լուծումները, այլ ոչ թե ամբողջ խաղողագինեգործական համալիրի, ինչը ենթադրվում է որ պետք է արվեր՝ ըստ ատենախոսության վերնագրի: Ատենախոսությունում ներկայացվող երկրորդ նորույթը ձևակերվում է հետևյալ կերպ՝ «ՀՀ Արմավիրի մարզի խաղողագործական տնտեսությունների համակողմանի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են մարզի խաղողագինեգործական համալիրի հիմնախնդիրները, և գնահատվել են զարգացման հնարավորությունները», անհասկանալի է մնում, թե ինչպես միայն խաղողագործական տնտեսությունները ուսումնասիրելով հնարավոր է եղել բացահայտել խաղողագինեգործական համալիրի խնդիրները: Այլ նորույթների ձևակերպումները ևս լավարկելու տեղ ունեն:

4. Ատենախոսության ծավալը, ընթացքում կատարված վերլուծությունների որակը, ըստ մեզ կարող էին հնարավորություն տալ ատենախոսին ներկայացնելու առավել ծավալուն, հիմնավորված և որակյալ եզրակացություններ, ինչում, ըստ մեզ, ատենախոսը որոշակիորեն թերացել է: Այն ծաղկաքաղը, որը պետք է արվեր կատարված ամբողջ աշխատանքից և առավել հարստացներ աշխատանքը, որոշակիորեն թերի է ներկայացված՝ ըստ մեզ:

5. Ատենախոսությունում առանձնակի մանրամասնությամբ անդրադարձ է կատարվել տնտեսամաթեմատիկական մոդելավորման DEA մեթոդին, որի օգնությամբ

վերլուծվել է խաղողագործական տնտեսությունների գործունեության արդյունավետությունը, սակայն բաց է թողնվել վերամշակող կազմակերպությունների գործունեության արդյունավետության վերլուծությունը:

Հեղինակը կիրառելով DEA մեթոդը և Տոբիտ ռեգրեսիոն մեթոդը փորձել է ներկայացնել ուսումնասիրվող մարզում խաղողագործության ճյուղի ազդեցության վրա մի քանի քանական և որակական բնույթի գործոնների ազդեցությունը: Ստացված մոդելում պարամետրերը ապահովել են նշանակալիություն: Մոդելի կիրառությունը ոլորտում և ընտրված գործոնները վկայում են հեղինակի կողմից հետազոտության թեմայի նկատմամբ վերլուծական գիտական մտքի կիրառության մասին: Այնուհանդերձ սույն մոդելի համար կան որոշակի դիտարկումներ՝ մասնավորապես Տոբիթ ռեգրեսիոն մոդելում որպես խաղողագործության արդյունավետության վրա ազդող գործոն հեղինակը ընտրել է խաղողագործի սեռը: Հարցադրում է առաջանում արդյոք հետազոտության շրջանակներում (թեկուզ հանրապետության մասշտաբով), բացահայտվել է, թե ինչպիսին է խաղողագործների կառուցվածքը ըստ սեռի: Եթե խաղողագործների հիմնական մասը ընտրանքում կամ թեկուզ ՀՀ-ում տղամարդիկ են, ապա որքանով է հիմնավորված խաղողագործի սեռը դիտարկել որպես գործոնային հատկանիշ:

6. Հեղինակը կառուցել է երկու լագային բաշխմամբ դինամիկ ռեգրեսիոն մոդելներ, առաջինում ներկայացրել է t տարում խաղողի համախառն բերքի վրա խաղողի իրացման (մթերման) գնի ազդեցությունը t-3 տարում, իսկ երկրորդ մոդելը ներկայացնում է t տարում խաղողի այգետարածքների վրա t-2 տարում խաղողի գնի ազդեցությունը: Այստեղ նույնպես կա մեկ նկատառում՝ հարցադրումների տեղիք է տալիս նաև այն, թե ինչո՞վ է պայմանավորված ռեգրեսիոն մոդելում գործոնների միջև լագային փոխկախվածությունը, մի դեպքում՝ խաղողի համախառն բերքի ծավալների վրա իրացման գները սկսում են նշանակալի ազդեցություն ունենալ 3 տարի անց, իսկ խաղողի այգետարածքների վրա՝ 2 տարի անց: Նշված դիտողությունները չեն անդրադառնում ատենախոսության որակի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Սիմոնի Ասատրյանի թեկնածուական ատենախոսությունը կարելի է գնահատել որպես՝ ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, ատենախոսության

հիմնական արդյունքներն ունեն գիտագործնական և կիրառական նշանակություն, այն իրենից ներկայացնում է ավարտուն աշխատություն, որտեղ առաջադրված խնդիրները, դրանց ուսումնասիրության համար ընտրված մեթոդաբանությունն ու իրականացված հետազոտությունները կատարված են գիտական պատշաճ մակարդակով:

Ատենախոսության վերաբերյալ հրատարակված գիտական հոդվածները և սեղմագիրը համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Հովհաննես Սիմոնի Ասատրյանի «Խաղողագինեգործական համալիրի զարգացման հիմնահարցերը ՀՀ Արմավիրի մարզում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՐԵԿՏՈՐ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ Հ. Ս. ԾՊՆԵՑՅԱՆ

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ
ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ, ՏՆՏԵՍԱԳԻ-
ՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ Լ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30 նոյեմբերի 2023 թվականի

Հրաչյա Ծպնեցյանի, Հասմիկ Հովհաննիսյանի, Արման Հարությունյանի, Լիանա Խաչատրյանի ստորագրությունների իսկությունը հաստատում եմ.

ՀԱԱՀ ԳԻՏ.ՔԱՐՏՈՒՂԱՐ, Գ.Գ.Դ., ԴՈՑԵՆՏ Գ. Վ. ԱՎԱԳՅԱՆ

Ընդհանուր բաժին
Общий отдел
General department